

Դավրիժեցուն անմիջաբար հաջորդող պատմիչ Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու եռահատոր «Պատմագրությունն» է, որ լեցուն է Առաքել Դավրիժեցու անձի ու գործի հիշատակումներով, «Գիրք պատմութեանց»-ից տարաբնույթ քաղումներով, վկայակոչումներով, զուգադրումներով<sup>21</sup>:

Հետագայի «օգտակար գործողության գործակցի» ցուցիչներից հիշատակելի են հատկապես Հովհ. Թումանյանի «Թագավորն ու չարչին» բալլադը, որը գրվել է Դավրիժեցու աշխատության համապատասխան վկայագրումների ու դրվագների հիմամբ, ինչպես նաև Մուրացանի «Անդրեաս երեց» պատմավեպը, որում ոչ միայն օգտագործված փաստերն ու դրվագներն են դավրիժեցիական, այլև իրադարձությունների գաղափարական գնահատումի շատ կողմեր:

Առաջիններից մեկը, ով գիտականորեն զբաղվել է Դավրիժեցու պատմագրքով, անվանի հայագետ Քերովբե Պատկանյանն է: Նրա և հորեղբորորդու՝ անվանի բանաստեղծ Ռափայել Պատկանյանի նամակագրության մեջ Դավրիժեցու պատմագիրքը հաճախակի է հիշատակվում: Քերովբե Պատկանյանը ծրագրել էր ռուսերեն թարգմանել «Գիրք պատմութեանց»-ն ու հրատարակել: Ռափայել Պատկանյանի նամակների հատորի ծանոթագրություններում այդ առթիվ կարդում ենք հետևյալը. «Драгоценные камни, их названия и свойства по понятию армян в XVII веке» աշխատության առաջաբանում Ք. Պատկանյանը գրում է, որ ձեռնարկել է «Կայսերական Ակադեմիայի հանձնարարությամբ Առաքել Դավրիժեցու (Թավրիզեցու) շատ հետաքրքրական պատմության տեքստը հրատարակելու գործին» և որ «այս հրատարակությունը Կայսերական Ակադեմիայի կարգադրությամբ ժամանակավորապես ընդհատված է»: Հետագայում նա այլևս չի անդրադարձել Դավրի-

---

<sup>21</sup> Տե՛ս, օրինակ, **Զաքարիա Սարկավագի Պատմագրութիւն**, հատոր Ա, Վաղարշապատ, 1870, էջ 4, 6, 20, 26, 53, 63 և այլն, հատոր Բ, Վաղարշապատ, 1870, էջ 96–97 և այլն, հատոր Գ, Վաղարշապատ, 1870, էջ 6, 29, 31, 39, 42 և այլն: